358
Ա-11

355

Պրոլետարներ բոլոր յերկրներից, միացեք

ՀՐԵՏԱՁՈՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՀՐԵՏԱՁՈՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թարգմ. Բ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հրատարակություն
Ընկ. Մլասնիկյանի անվան Միացյալ Հայկական
Ռազմական Դպրոցի
1927 թ.

358
Ա-11

1 MAR 2010

ԿՐԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆ.

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏԻ ՀԱՄԱՐ.

1. Կրակի դիրքում հրանոթները դասավորվում են հարմարվելով տեղանքին և քողարկվելով բնական ծածկարաններով (ծառերի դագաթներով, տեղական առարկաների սավերային ծածկերով և այլն)։

Այն հրանոթները, որոնք դարձյակների թեքության ազդեցությունը վերացնող հարմարանքներ չունեն, դասավորվում են հնարավորին չափ հորիզոնական հարթակներում։

Ցեաքերը (ամբարկղի) դրվում են միշտ հրանոթից ձախ, կես քայլ հեռավորության վրա։

2. Կրակի դասակի հրամատարը, իբրև կանոն, տեղավորվում է կրակի դիրքի թևերից մեկում, հեռախոսին մոտիկ։ Կրակի ջոկի հրամատարը՝ դիրքի կենտրոնին մոտ այնպես, որ հարմար լինի դիտել ջոկի բոլոր հրանոթների աշխատանքը։ Հրանոթի անձնական կազմը տեղավորվում է նյութական մասի մոտ, ինչպես ցույց է տրված №1 գծանկարում (գրքի վերջում), գործողության համար ավելի հարմար դրություն ընդունելով։

1008
364776

42.488
11 SEP 2013

3. Դեռ կրակի դիրքը բռնելուց առաջ, չըպասելով «Ի ՄԱՐՏ» հրամանի կատարելուն (տ. հոդ. 5), դասակի հրամատարը նշում է՝ ա) հիմնական հրանոթը, բ) ընտրում է նշանառության կետը հիմնական հրանոթին յելակետային ուղղություն տալու համար, գ) վորոշում է հիմնական հրանոթի անկյունաչափի հասման տրվյալները, դ) նրանց գրի յե առնում։

4. Կրակի դիրքը բռնելուց և քարշակների հեռանալուց անմիջապես հետո, կրակի ջոկը պատրաստվում է մարտի։

Մարտին պատրաստվելը բաղկանում է՝ ա) նյութական մասը մարտական դրության բերելուց, բ) հիմնական հրանոթին յելակետային ուղղություն տալուց, գ) հովհար կազմելուց և դ) կրակի դիրքի սարքավորումից։ Այս բոլոր գործողությունները կատարվում են այն հաջորդականությամբ, վորն ապահովում է ավելի արագ կրակ բանալը։

5. Նյութական մասը մարտական դրության բերելու համար, կրակի դասակի հրամատարը հրաման է տալիս՝ «Ի ՄԱՐՏ»։ Այս հրամանը կատարվում է, ինչպես ցույց է տրված կանոնագրքի վերջում բերված աղյուսակում։

«Ի ՄԱՐՏ» հրամանի կատարման հետ միաժամանակ, դասակի հրամատարը, յեթե պահանջվում է, չափում է լիցքերի ջերմաստիճանը և հետևանքների մասին զեկուցում է մարտկոցի հրամատարին։

Հրանոթների հրամատարները զննում են նյութական մասը, հատուկ ուշադրություն դարձնելով փողանցքի դրության վրա. նկատելով փողանցքում ավազ կամ փոշի, հրամայում են ուղղեկավորներին անցքը մաքրել փարախչով։

6. Սովորաբար իբրև հիմնական հրանոթ նշանակվում է աջաթևյանը, բայց յեթե նա այնպես է դասավորված, վոր չի կարող նշանակվել մարտկոցի մնացած հրանոթների (կամ գոնե նրանցից մեկի) վերաբերմամբ, կամ յեթե տեղանքի պայմաններով աջաթևյան հրանոթի տեղի տեղագրական վորոշումը դժվար է, պետք է իբրև հիմնական հրանոթ նշանակել մի ուրիշը։

7. Հիմնական հրանոթի համար նշանառության կետը պետք է ընտրել այն հաշվով, վոր նա տեսանելի լինի մարտկոցի բոլոր հրանոթներին։ Նշանառության կետի ամենահարմար դրությունն այն է, յերբ նա կրակի դիրքի յետևումն է և 250 մետրից վոչ պակաս հեռավորության վրա։

8. Վորպես ընդհանուր կանոն, յելակետային ուղղությունը ցույց է տալիս մարտկոցի հրա-

մատարը. իսկ յեթե այդ ուղղությունը դասակի հրամատարը ժամանակին չի ստացել, նա պարտավոր է, ղեկավարվելով պարագայի մասին ընդհանուր տեղեկություններով, ինքն ընտրելու մի վորևե ուղղություն, ընդունելով նրան վորպես յելակետային և ուղղել մարտկոցի հովհարը դեպի այդ կետը։ Մարտկոցի հրամատարից յելակետային ուղղության բուսոն ստանալուց հետո, դասակի հրամատարը դարձնում է մարտկոցի հովհարը, հրամանով նշանակված և առաջուց ընդունած բուսոնների տարբերության չափով։

9. Կրակի ծածկված դիրքում տեղավորվելու ժամանակ, մարտկոցի հրամատարի ցույց տված յելակետային ուղղությունը հիմնական հրանոթին տալու համար, դասակի հրամատարը դեռ կրակի դիրքը բռնելուց առաջ կատարում է հետևյալը՝

ա) Դնում է բուսոն այն տեղում, ուր մըտադիր է կանգնեցնել հիմնական հրանոթը.

բ) Բուսոն ուղղում է մարտկոցի հրամատարի ցույց տված ուղղությամբ, սլաքի հյուսիսային ծայրը հրամայված բաժանումի վրա բերելով.

գ) Նշադրվում է ընտրած նշանառության կետի վերաբերյալ.

դ) Կրակի դիրքը բռնելուց հետո, սպասելով նվազագույն նշանոցների վորոշելուն, յեթե դրա անհրաժեշտությունն զգացվում է, հրաման է տալիս՝ «ԱՅՍԻՆՉԸ ՀԻՄՆԱԿԱՆՆ Է», «ՀԻՄՆԱԿԱՆԻՆ 00—00, ՆՇԱՆ ԲՌՆԵԼ ԱՅՍԻՆՉ ՏԵՂԻՆ»։

Չոկի հրամատարը կրկնում է հրամանը, ընդունելով հրանոթի հրամատարից բարձրացրած ձեռքով՝ «ՊԱՏՐԱՍՏ Է» նշանը, ձեռքի թափահարումով հրամայում է նրան ձեռքն իջեցնել։

Բոլոր հրանոթների հրամատարները կրկնում են հրամանը և ցույց են տալիս իրենց նշանառուներին դասակի հրամատարի նշանակած նշանառության կետը։ Յեթե վերջինս համացույցի մեջ չի յերևում, այդ մասին զեկուցում են Չոկի հրամատարին հետևյալ բառերով՝ «ԱՅՍԻՆՉԻՆ ՉԻ ՅԵՐԵՎՈՒՄ»—և ընտրում են իրենց հրանոթների համար նշանառության առանձին կետեր, ցույց տալով նրանց՝ նշանառուներին։

Հիմնական հրանոթի հրամատարը կրկնում է հրամանը, ցույց է տալիս նշանառուին նշանառության կետը և նրանից զեկույց ստանալով՝ «ՊԱՏՐԱՍՏ Է», բարձրացնում է ձեռքը, վորը պահում է այդ դրությամբ մինչև Չոկի հրամատարի ազդանշան տալը։

Հիմնական հրանոթի նշանառուն

պարզում է իրեն ցույց տրված կետը, հաստատում է անկյունաչափը հրամայված բաժանման վրա, ուղղեկավորի ոգնությամբ նշան է բռնում այդ կետին և զեկուցում է հրանոթի հրամատարին՝ «ՊԱՏՐԱՍՏ Է»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.—Յեթե դասակի հրամատարին վորևե պատճառով չհաջողվեց յելակետային ուղղության ավյալները վորոշել մինչև հիմնական հրանոթի գալը, այդ դեպքում նա գնում է բուսոլը մոտավորապես ընտրած նշանառության կետի և հիմնական հրանոթի ծածկորդում, հրանոթից 10—15 քայլի վրա, հետազայում վարվելով այնպես, ինչպես ցույց է տրված հոդ. 9-ի բ, գ և դ կետերում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—Յեթե յելակետային ուղղությունը տրվում է մարտկոցի հրամատարի կողմից վոչ բուսոլով, այլ անկյունաչափով (ԱՅՍԻՆՉԻՆ 00—00, ՆՇԱՆ ԲՌՆԵԼ ԴԻՏԱԿԵՏԻ ՍՏԵՐԵՈ-ԴԻՏԱԿԻՆ» հրամանով), այդ դեպքում հիմնական հրանոթը նշանակում է մարտկոցի հրամատարը։ ա—գ կետերում ցույց տված գործողությունները դասակի հրամատարը չի կատարում, այլ ուղղակի հրաման է տալիս, ինչպես ասված է դ կետում։

10. Կրակի ջոկը խոր ծածկված դիրքում տեղավորվելու ժամանակ, «Ի ՄԱՐՏ» հրամանի կատարումը վերջացնելուց հետո, դասակի հրամատարը հրամայում է վորոշել նվազագույն

նշանոցները, վորի համար հրաման է տալիս՝ «ՆՇԱՆՈՑՆԵՐ»։

Կատարումը.—Հրանոթների հրամատարներն ընտրում են ծածկարանի ամենաբնորոշ կետերը, իրենց հրանոթների հավանական հրակոծման սեկտորում (15—0 անկյան սահմանում) և այդ կետերը ցույց են տալիս իրենց ուղղեկավորներին։

Ուղղեկավորները, նայելով վահանի վրայով, կոպիտ կերպով ուղղում են հրանոթը, հրանոթի հրամատարի ցույց տված ուղղությամբ.

Նշանառուները վորոշում են այդ ուղղությամբ նվազագույն նշանոցը և զեկուցում են հրանոթի հրամատարին հետևյալ բառերով՝ «ԱՅՍՔԱՆ Է» (որինակ՝ «ՅԵՐԵՍՈՒՆ ՀԻՆԳ»)։

Հրանոթների հրամատարները, նշանառուներից ստանալով վորոշելու հետևանքները, զեկուցում են ջոկի հրամատարին, հրանոթների № №-ի կարգով, հետևյալ բառերով՝ «ԱՅՍԻՆՉԸ ԱՅՍՔԱՆ Է» (որինակ՝ ՅԵՐԿՐՈՐԴԸ—ՅԵՐԵՍՈՒՆ ՀԻՆԳ)։

Յեթե «ՆՇԱՆՈՑՆԵՐ» հրամանը դասակի հրամատարը տալիս է հովհարը կազմելուց հետո, ուղղեկավորները չեն փոխում հրանոթի ուղղությունը, իսկ նշանառուները չափում են

նվազագույն նշանոցներն այն ուղղությամբ, վո-
րում կը գտնվեն հրանոթներն այդ հրամանը կա-
տարելու սկզբում։

11. Յերբ հիմնական հրանոթը վերցնի յե-
լակետային ուղղությունը, ջոկի հրամատարը
հրաման է տալիս «ՀՈՎՀԱՐ»։

Հրանոթների հրամատարները կը-
կնում են հրամանը։

Փականավորները վերցնում են նշանա-
ձողերը և պահում են համացույցների վրա ուղ-
ղաձիգ դրությամբ։

Հիմնական հրանոթի նշանառուն
հաջորդաբար նշադրվում է մնացած հրանոթների
համացույցների (նշանաձողերի) վերաբերյալ՝
սկսելով աջ թևից և յուրաքանչյուր նշադրումը
վերջացնելով, առանց համացույցից բաժանվե-
լու, արտասանում է՝ «ԱՅՍԻՆՉԻ» վերաբերյալ.
ստացած նիշը համապատասխան հրանոթին տա-
լուց հետո, անցնում է հետևյալի նշադրությանը։
Վերջին հրանոթի վերաբերյալ նշադրվելուց հե-
տո, զեկուցում է հրանոթի հրամատարին՝
«ՊԱՏՐԱՍՏ Է» և դնում է անկյունաչափը յե-
լակետային ուղղության հասման վրա։

Հիմնական հրանոթի հրամատարը
կանգնում է նշանառուի յետևը, կարդում է հեր-

թական նիշերը և այդ նիշերը տալիս է համապա-
տասխան հրանոթի հրամատարին՝ «ԱՅՍԻՆՉԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 00—00»։

Մնացած հրանոթների հրամատար-
ները, ընդունելով այդ նիշերը, հրամայում են
փականավորին իջեցնել նշանաձողը, փոփոխում
են ստացած նիշը 30—00-ով և նշանառուին
հրաման են տալիս «00 -00»։

Նշանառուները (բացի հիմնականից) հաս-
տատում են անկյունաչափը հրանոթի հրամա-
տարի հրամանով տված բաժանման վրա, նշան
են բռնում հիմնականի համացույցին (նշանա-
ձողին), նշադրվում են առաջուց նշանակված
նշանառության կետին (հոդ. 9), կարդում են
անկյունաչափի ստացված նիշը և զեկուցում են
հրանոթի հրամատարին՝ «ՆԻՇԸ 00—00»։

Հրանոթների հրամատարները (բա-
ցի հիմնականից) գրի չեն առնում նիշերը և բար-
ձրացնում ձեռքը։

Հովհարը կազմելուց հետո, ջոկի հրամա-
տարը ձեռքի թափահարումով հրամայում է
հրանոթների հրամատարներին իջեցնել ձեռ-
քերը և զեկուցում է դասակի հրամատարին՝
«ՊԱՏՐԱՍՏ Է», իսկ վերջինս՝ մարտկոցի հրա-
մատարին՝ «ՀՈՎՀԱՐԸ ՊԱՏՐԱՍՏ Է»։

Բաց կրակային դիրք բռնելու ժամանակ, վորպես ընդհանուր կանոն, հովհարը չի կազմվում, իսկ յելակետային ուղղությունը վերցվում է բոլոր հրանոթների նշանառությամբ նրպատակին կամ կողմորոշին անդրադարձիկի միջոցով։

12. Յեթե կրակի դիրքը գտնվում է գառիվայրում, և հրանոթների հորիզոնները տարբերվում են հիմնական հրանոթի հորիզոնից ավելի քան յերկու մետր, դասակի հրամատարը հաշվում է այդ հրանոթների համար հարթաչափերի ուղղումները տարբեր հեռակայությունների համար և կազմում է ուղղումների աղյուսակ (տ. հավելված №...), վորով ոգտվում է հրաձգության ժամանակ։

13. Կրակի դիրքի սարքավորումը բաղկանում է հետևյալից՝ խոփիկի համար ակոսները փորելուց, մեծ հեռակայության վրա հրաձգության համար հրետասայլի առատամի համար փոս փորելուց և անձնական կազմի համար թագստոցներ պատրաստելուց։

Խոփիկի ակոսները փորելն ու ամրացնելն ուղղեկավորների պարտականությունն է. նրանք այդ կատարում են հրանոթների հրամատարների հրամանով՝ հովհար կազմելը վերջացնելուց

հետո, բայց յերբեք հրաձգությունը չպետք է ուշացնել։ Յեթե հրաձգությունը կատարվում է այնպիսի հեռակայությունների վրա, վորոնք առատամների տակը փորել չեն պահանջում, կրակը կարելի յե բանալ և առանց խոփիկի ակոսների. յեթե ժամանակ չկա, խոփիկի ակոսները պատրաստվում են հրաձգության ընթացքում, ոգտվելով զանազան մանր ընդհատումներից։

Առատամների տակը փորելը կատարվում է հրանոթի հրամատարի հրամանով, յեթե նա այնպիսի նշանոցի հրաման է ստանում, վորն առատամի խորացում է պահանջում, կամ մարտկոցի հրամատարի առաջուց տված ցուցումով։ Այդ աշխատանքը կատարում են ուղղեկավոր և վիկանավոր համարները։

Անձնական կազմի համար թագստոցները սարքավորում են դասակի հրամատարի հրամանով, և այն դեպքում միայն, յեթե դրա համար կա ժամանակ և աշխատանքները քողարկելու հնարավորություն։

ՄԱՐՏ

14. Մարտկոցը կարող է կրակ վարել հրանոթներով և ջոկով։ Կրակը ջոկով կարելի յե վարել՝ ա) հրամանով, բ) անընդհատ՝ ձիգերի միջև ժամանակամիջոց նշանակելով, գ) շռապ, հրանոթների ձիգերի թիվը նշանակելով։

Հրանոթներով հրաձգությունը գործադրվում է՝ ա) մարտկոցի սկզբնական ուղղությունն ստուգելու համար և բ) նեղ անշարժ նպատակին, փորձական հրաձգություն կատարելու համար։

Հրամանով կատարվելիք ջոկի հրաձգությունը գործադրվում է բացառապես փորձնական հրաձգության ժամանակ։

Անընդհատ կրակը գործադրվում է՝ ա) մեռյալ նպատակներ ավերելու համար, բ) քիմիական ամպ պահպանելու համար, գ) խափանիչ կրակի ժամանակ և դ) կայուն քիմիական արկերով հրաձգության ժամանակ։

Շտապ կրակը հարվածական հրաձգության նորմալ ձևն է՝ կենդանի նպատակների դեմ և անկայուն թունավորող նյութերով լի քիմիական արկերով հրաձգության ժամանակ։

15. Հրամաններ տալու կանոնները.— 1) Մարտկոցի հրամատարի բոլոր հրամանները, բացի հրամաններից «ԲՈՒՍՈԼ 00—00» և «ԿՐԱԿ», ընդունվում և կրկնվում են կրակի ջոկի և հրանոթների հրամատարների կողմից։

2) «ԲՈՒՍՈԼ 00—00» հրամանն ընդունվում է միայն դասակի հրամատարի կողմից և վոչ վոքի չի հաղորդվում։

3) «ԿՐԱԿ» հրամանը տրվում է մարտկոցին, միայն դասակի հրամատարի միջոցով։

4) Կրակի դասակի հրամատարը տալիս է միայն այն հրամանները, վորոնք լրացնում են մարտկոցի հրամատարի հրամանները և տալիս է «ԿՐԱԿ» ու «ՃԻՇՏ Է» հրամանները։ Նրա բոլոր հրամանները կրկնվում են կրակի ջոկի հրամատարի և հրանոթների հրամատարների կողմից։

5) Կրակի ջոկի հրամատարի հրամանները կրկնվում են հրանոթների հրամատարների կողմից։

6) Հրամանները գրի չեն առնում կրակի ջոկի հրամատարը և հրանոթների հրամատարները, կանոնագրքի վերջում բերված ձևերի համաձայն։ Վտանգավոր մոտիկության վրա հրաձգության ժամանակ՝ հրամանները գրի չեն առնում։

7) Կրակի դիրքում բոլոր հրամանները տրվում են այնքան բարձր ձայնով և պարզ արտասանությամբ, վոր ամեն մի հրաման տվող համոզված լինի, վոր հրամանը ճիշտ է ընդունված։

8) Իրար հետևող հրամանները տրվում են ժամանակի այնպիսի հաշվառումով, վորն անհրաժեշտ է դրանց կատարելու համար, այսինքն այնպիսի միջոցներով, վորպեսզի յուրաքանչյուր

հաջորդ հրամանը չկարողանա նախորդի առաջն ընկնել, վերջինիս տալու ու կատարելու ժամանակ։ Հրամաններ տալու ամեն մի արագացումը, վոր համաձայնեցված չե վերոհիշյալ կանոնի հետ, առաջ ե բերում մարտկոցի գործողությունների ընդհանուր դանդաղեցում ու ավելորդ սխալներ և բացասական հետևանքներ ե տալիս։

9) Բաց կրակի դիրքից հրաձգություն կատարելիս, նպատակը միշտ ցույց ե տրվում ամենակարճ և պարզ արտահայտություններով. որինակ՝ «ՆՊԱՏԱԿԸ—ՀԵՏԵՎԱԿՆ Ե, ԱՆՏԱՌԻ ՅԵԶՐՈՒՄ, ՎՈՐ ՃԱԿԱՏԻ ԱՌՋԵՎՈՒՄՆ Ե ՈՒ ԴԵՊԻ ՁԱԽ»։

Յեթե նպատակն այնքան ե պարզ յերևում, վոր առանձին բացատրություններ չի պահանջվում, պետք ե ավելի կարճ հրաման տալ. որինակ՝ «ՆՊԱՏԱԿԸ—ՄԵԶ ՎՐԱ ԿՐԱԿՈՂ ՀԵՏԵՎԱԿՆ Ե»։

10) Նշանառության կետը ցույց տալու ժամանակ անհրաժեշտ ե պահպանել նույն կանոնը։

11) Լիցքեր նշանակելու համար (հոբիցային մարտկոցներում) հրաման ե տրվում՝ «ԼԻՑՔ—ԱՌԱՋԻՆ (յերկրորդ, յերրորդ) կամ ԼՐԻՎ—ԼԻՑՔ»։

12) Անկյունաչափի և հարթաչափի հաստումներին վերաբերող հրամանները տրվում են

միշտ յերկու թվով. առաջինը վերաբերում ե համացուցի ողակին կամ հարթաչափի աղեղին (կամ 122 մ. մ. 1909 թ. հոբիցի հարթաչափի բաժանումների հարյուրյակներին), իսկ յերկրորդը՝ նույն հարմարանքների թմբուկներին (կամ 122 մ. մ. 1909 թ. հոբիցի հարթաչափի բաժանումների տասնյակներին ու միավորներին). որինակ՝ 30—00 (յերեսուն—զերո), 2—10 (յերկու—տասը), 45—15 (քառասուն հինգ—տասնհինգ), 1—05 (մեկ—զերո հինգ), 0—03 (զերո—զերո—յերեք)։

13. Բուսոլի հաստման հրամանը միշտ տրվում ե համացուցի բաժանումներով. որինակ՝ ԲՈՒՍՈԼԸ ՅԵՐԵՍՈՒՆՀԻՆԳ—ՔԱՌԱՍՈՒՆ (354)։

14) Նշանոցի և (հեռակայական) փողակի հաստումը հրամայվում ե՝ ա) զերոյից մինչև 49 ներառյալ մեկ թվով միասին. բ) 50-ից բարձր բաժանված թվերով. որինակ՝ 15 (տասնհինգ), 48 (քառասուն ութ), 74 (յոթ—չորս), 106 (մեկ—զերո—վեց) 110 (մեկ—մեկ—զերո) 167 (մեկ—վեց—յոթ)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն փողակի հաստումը, վորի բաժանումները վարկյաններով են, հրամայվում ե յերկու թվով, վորոնցից առաջինը վերաբերվում ե մեծ բաժանումներին, իսկ յերկրորդը՝ փոքրներին. որինակ՝ 25, 3 (քսանհինգ և յերեք)։

16. Սկզբնական կրակը բանալու համար մարտկոցի հրամատարը հրաման է տալիս՝

ա) Հրաձգության ժամանակ, երբ նշանառությունը կատարվում է հարթաչափով։

1. ՆՊԱՏԱԿՆ ԱՅՍԻՆՉՆ Է.

2. ՇՐԱՊՆԵԼՈՎ (նռնակով, ռումբով, քիմիականով, հրձիգ, լուսատու, ագիտացիոն արկով) №0 *).

3. ԼԻՑՔ—0 (հոբիցային մարտկոցներում).

4. ՑԵՎՍ ՉԱԽ (աջ) 00--00 **).

5. ՀԱՐԹԱՉԱՓՆ ԱՎԵԼԻ (ՊԱԿԱՍ) 0–00 ***)

6. ՆՇԱՆՈՑ 0 – 0.

7. ՓՈՂԱԿ 0 —0.

8. ՉՈԿՈՎ (հրանոթներով) կամ ԱՅՍՔԱՆ ՉԻԳ ******) կամ ԱՅՍՔԱՆ ՎԱՅՐԿՑԱՆ (բոպե) ՄԻ ՉԻԳ.

9. ԿՐԱԿ։

բ) Հրաձգության ժամանակ երբ նշանառությունը կատարվում է անդրադարձիկով (բաց կրակի դիրքից).

1. ՆՊԱՏԱԿԸ ԱՅՍԻՆՉՆ Է.

2. ՇՐԱՊՆԵԼՈՎ (նռնակով, ռումբով, հրձիգով № 0. *).

3. ԼԻՑՔ—0 (հոբիցային մարտկոցներում).

4. ԱՆԿՅՈՒՆԱՉԱՓ 00—00.

5. ՆՇԱՆ ԲՌՆԵԼ ԱՅՍԻՆՉ ՏԵՂԻՆ ****).

6. ՆՇԱՆՈՑ 0- 0.

7. ՓՈՂԱԿ 0– 0.

8. ՉՈԿՈՎ կամ «ԱՅՍՔԱՆ ՉԻԳ» ******).

9. ԿՐԱԿ.

գ) Հրաձգության ժամանակ երբ նշանառությունը կատարվում է տարդիտական փողակով (վտանգավոր մոտիկության նպատակներին բաց դիրքից).

1. ՆՊԱՏԱԿՆ ԱՅՍԻՆՉՆ Է.

2. ՇՐԱՊՆԵԼՈՎ № 0. *)

3. ՏԱՐԱԴԻՏԱԿԱՆ ՓՈՂԱԿՈՎ.

4. ՆՇԱՆՈՑ 0- 0.

5. ՓՈՂԱԿ 0--0.

6. ՄԱՐՏԿՈՑՈՎ կամ «ԱՅՍՔԱՆ ՉԻԳ».******)

4008
36476

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ *) Արկերի №№-ներ ցույց են տրվում հավելվածում բերված աղյուսակի համաձայն։

**) Հրամցվում է միայն այն դեպքում, երբ հրաձգության ուղղությունը չի համապատասխանում հրանոթների վերջին ուղղությանը.

***) Հրամայվում է միայն կարիք չեղած դեպքում.

****) Նշանառությունը կատարվում է անդ.

7. ԿՐԱԿ.

դ) Մարտկոցի ինքնապաշտպանության ժամանակ.

1. «ԿԱՐՏԵՋ».

17 կատարումը.—

ա) «ՇՐԱՊՆԵԼՈՎ» (նոնակով, ռումբով, քիմիականով և այլն) № 0, հրամանով.

Արկղավորները փամփշտի վանդակներից (բներից) հանում են 2 արկ (փամփուշտ) ցույց տված տիպարի և համարի։

Փականավորները բացում են փականքները և (152 մ. մ. մարտկոցներում) բաց են անում փամփշտի վանդակները։

բ) «ԿԱՐՏԵՋ» հրամանով։

Հրանոթների հրամատարները ընտրում են հրաձգության ուղղությունը և ցույց են տալիս ուղղեկավորներին։

Նշանառները հրանոթի մարմինը բերում են մոտավորապես հորիզոնական դրության և ամբողջ հրաձգության ընթացքում, քանի խորանում է առատամը, պահպանում են այդ դրությունը, գործելով վերամբարձ մեխանիզմով. հրանոթը լցնելուն պես, արձակում են, կրակը դադարեցնելով միայն մարտկոցի հրամատարի «ԿԱՑ» հրամանով (122 մ. մ. 1909 թ. հոբիցով զինված մարտկոցներում, ձիգը կատարում են փականավորները)։

Փականավորները բաց են անում փականքները հրանոթը լցնելու համար, վորից հետո անմիջապես փակում են նրանց և նորից բաց են անում ամեն մի ձիգից հետո (122 մ. մ. 1909 թ. հոբիցային մարտկոցներում կատարում են ձիգերը, կրակը դադարեցնելով միայն «ԿԱՑ» հրամանով)։

Ուղղեկավորները հրանոթին կոպիտ կերպով ուղղություն են տալիս՝ հրանոթի հրամատարի ցույց տված ուղղությամբ և հրաձգության ժամանակ ուղղում են նշանառությունը, կրակի մեծ տեղափոխությունների դեպքում։

Լցնողներն ընդունում են հերթական փամփուշտները (արկերը և պարկուճները) առաջին արկղավորներից և յուրաքանչյուր ձիգից հետո լցնում են հրանոթը, մինչև «ԿԱՑ» հրամանը։

ըադարձիկով, վերջինս 0-ի վրա հասատելով.

*****) Վերաբերվում է միայն այն մարտկոցներին, վորոնք զինված են 3 մատնաչ. (76 մ. մ.) 1902 թվի տիպարի թնդանոթներով։

******) Ամեն մի հրանոթի համար։

Արկղավորներն անընդհատ պատրաստում են հերթական ձիգերը. այդ ժամանակ շրապնելների թասակները կարելի է չհանել։

գ) «ԼԻՑՔ 0» հրամանով.

Յերկրորդ արկղավորները վերցնում են պարկուճը վանդակներից և հրամանի համաձայն պատրաստում են լիցքը. սպասելով, յերբ արկը դրված կլինի հրանոթի մեջ, մոտենում են լցնողներին և տալիս են նրանց պարկուճը. վերցնում են վանդակներից հետևյալ պարկուճը և լիցքը։

դ) «ՆՊԱՏԱԿՆ ԱՅՍԻՆՉՆ Ե» հրամանով.

Հրանոթների հրամատարները իրենց համար պարզում են նպատակը և ցույց են տալիս նշանառուներին։ Յեթե դրա հետ միասին կհետևի «ՆՇԱՆ ԲՌՆԵԼ ԱՅՍԻՆՉ ՏԵՂԻՆ» հրամանը, գտնում են այդ կետը և ցույց են տալիս նշանառուներին։ Յեթե այդպիսի հրաման չի հետևի (որինակ, տարադիտական փողակով հրաձգություն կատարելիս), իրենք ընտրում են ավելի ձեռնտու նշանառության կետը և ցույց են տալիս նշանառուներին։

յ) Նշանոցային հարմարանքների անկյունաչափի, հարթաչափի և նշանոցի) հաստատումներին վերաբերյալ հրամաններով։

Հրանոթների հրամատարները գրի յեն առնում ընդունած հրամաններն ու նշանոցային հարմարանքների վերջնական հաստատումները և ստուգում են նշանառուներին.

Նշանառուները հաստում են նշանոցային հարմարանքները հրամայված բաժանումների վրա կամ մոցնում են հրամայված փոփոխումները, աշխատելով տրված հրամանների հաջորդականությամբ և բարձրաձայն արտասանում են վերջնական հաստումը, ուղղեկավորների ոգնությամբ հրանոթով նշան են բռնում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 76 մ. մ. և 122 մ. մ. մարակոցներում նշանոցը կարող է հաստել փականավորը։

զ) «ՓՈՂԱԿ 0 — 0» հրամանով.

Հրանոթների հրամատարները գրի յեն առնում ընդունած հրամանները և ստուգում են հաստողին։

1-ին արկղավորները վերցնում են հերթական փամփուշտը (արկը), փողակը հաստում են հրամայված բաժանման վրա և բարձրաձայն արտասանում են հաստումը։

Լցնողները (հորիցային մարակոցներում) ոգնում են առաջին արկղավորների փողակը հաստելուն։

2-րդ արկղավորները (թնդանոթային

մարտկոցներում) պատրաստում են հերթական փամփուշտը։

Ե) «ԿՐԱԿ» հրամանով.

Ջոկի հրամատարը բարձրացնում է ձեռքը, սպասում է հրանոթների պատրաստվելուն, հրաման է տալիս՝ «ԱՅՍԻՆՁԸ», միաժամանակ ձեռքն իջեցնելով. ջոկով հրաձգություն կատարելիս և անընդհատ կրակ վարելու ժամանակ տալիս է նույն հրամանը հաջորդաբար բոլոր հրանոթների համար, ամեն անգամ ձեռքը բարձրացնելով և նորից իջեցնելով։

ԾԱՆՈԹԱԹՅՈՒՆ.— Շտապ կրակով հրաձգության ժամանակ, ձիգերը կատարվում են առանց հրամանների։

Կրակող հրանոթների առաջին արկղավորները փամփուշտը (արկը) տալիս են լցնողին։

Կրակող հրանոթների լցնողները (եթե հարկավոր է) դուրս են քաշում բուլիքը, ընդունում են առաջին արկղավորներից փամփուշտը (արկը), ստուգում են հեռակայական փողակի հատումը, փամփուշտը (արկը) դնում են հրանոթի մեջ (152 մ. մ. հոբիցային մարտկոցներում առանց բուլիքը դուրս քաշելու դընում են փամփշտի վանդակի վրա), ընդունում են (հոբիցային մարտկոցներում) յերկրորդ արկ-

ղավորներից պարկուճը և դնում հրանոթի մեջ։

Կրակող հրանոթների 2-րդ ուղղեկավորները (152 մ. մ. հոբիցային մարտկոցներում) արկը հասցնում են իր տեղը խցկանով։

Կրակող հրանոթների փականավորներն սպասելով հրանոթի վերջնականապես լցնելուն, ծածկում են փականքը, ձիգից հետո բացում են փականքը, հրաձգության ընթացքում հետևում են յեռասհման ցուցիչին։

152 մ. մ. հոբիցային մարտկոցներում դուրս են քաշում (յեթե հարկավոր է) բուլիքը. յերբ արկը հասնում է իր տեղը (հրանոթի մեջ), ձգում են լցավանդակները. իսկ յերբ լիցքը տեղը դրված լինի, ծածկում են փականքը, ձիգից հետո բացում են փականքը, յետ են գցում լցավանդակը, հետևում են յեռասհման ցուցիչին։

Կրակող հրանոթների նշանառուները սպասելով, վոր փականավորը փականքը ծածկի, վերցնում են հրալարը, և յեթե մարտկոցը հերթական կամ անընդհատ կրակ է վարում, ջոկի հրամատարի հրամանով ձիգ են կատարում. իսկ յեթե մարտկոցը շտապ կրակ է վարում, ձիգը կատարում են հրանոթի պատրաստվելուց անմիջապես հետո, առանց մեկն ու մեկի հրամանին սպասելու։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. 122 մ. մ. 1909 թ. տիպարի հորիցով զինված մարտկոցներում ձիգը կատարում են փականավորները, վարվելով այնպես, ինչպես ցույց է տրված վերևում նշանառուների համար. յեթե խոփիկները հրաձգությունից առաջ բավականին ամրացված չեն յեղել, այդ դեպքում մինչև սիստեմի յետսահումը վերջանալը, ձիգը կատարելու համար նրանք ոգտվում են յերկար հրալարով։

2. Պակսեցրած լիցքով հրաձգության ժամանակ վառոդի ավելորդ խուրձերը դարսվում են կրակած պարկուճների մեջ. յերկրորդ արկղավոր համարները բոլոր մարտկոցներում կրակած պարկուճները դարսում են փամփշտի վանդակների մեջ, ոգտագործելով դրա համար ամեն մի հնարավորություն, յերբեք չընդհատելով հրանոթի աշխատանքը։

18. Յեթե հրաձգությունից առաջ խոփիկները բավականին ամրացված չեն յեղել, այդ դեպքում մինչև սիստեմի յետսահման վերջանալը, նշանառուները, փականավորները և ուղղեկավորներն ամեն մի ձիգից առաջ հեռանում են հրանոթից այնքան, որ յետ ոահող հրանոթը վոչ վոքի չդիպչի։ Սիստեմի յետսահումը վերջանալուց հետո նշանառուն և փականավորը կարող են ոգտվել նստոցներով, յեթե այդպիսին կա։

19. Առաջուց տրված հրամանների փոփոխումը.

1. Արկը փոխելու համար հրաման տալ՝ «ԱՅՍԻՆՉՈՎ № 0».

2. Լիցքը փոխելու համար հրաման տալ՝ «ԼԻՑՔ 0».

3. Հրաձգության ընթացքում նպատակը փոխելու համար հրաման տալ՝ «ԿԱՑ, ՆՊԱՏԱԿՆ ԱՅՍԻՆՉՆ Ե».

4. Անկյունաչափի հաստումը փոխելու համար հրաման տալ՝ «ՅԵՎՍ ՉԱԽ (աջ) 00—00».

5. Հարթաչափի հաստումը փոխելու համար հրաման տալ՝ «ՀԱՐԹԱՉԱՓՆ ԱՎԵԼԻ (պակաս) 00—00».

6. Նշանոցի հաստումը փոխելու համար հրաման տալ՝ «ՆՇԱՆՈՑԸ 0—0».

7. Փողակի հաստումը փոխելու համար հրաման տալ՝ «ՓՈՂԱԿԸ 0—0».

8. Կրակի կարգը փոխելու համար հրամանով տալ նրա նոր կարգը. որինակ, յեթե մարտկոցը կրակում է հրանոթներով և պահանջվում է կրակել ջոկով, հրաման տալ՝ «ՋՈԿՈՎ», կամ յեթե մարտկոցը կրակում է շտապ կրակով և պահանջվում է անընդհատ կրակ սկսել, հրաման տալ՝ «ԱՅՍՔԱՆ ՎԱՅՐԿՅԱՆՈՒՄ» (բոպեյում) մեկ ձիգ և այլն։

9. Պայթունների հովհարի լայնությունը փոխելու համար հրաման տալ՝ «ՄԻԱՑՆԵԼ ԱՅՍ-

ԻՆՉԻՆ» կամ «ԲԱԺԱՆԵԼ ԱՅՍԻՆՉԻՑ 00—00».

Կատարումը.—Ցույց տված հրանոթի հրամատարն այդ հրամանը չի ընդունում։

Մյուս հրանոթների հրամատարները բազմապատկում են հրամայված թիվը՝ մինչև ցույց տված հրանոթը յեղած միջանցների վրա, հրաման են տալիս՝ «ՅԵՎՍ ԱՋ (ՁԱՂ) 00—00» և ստուգում են անկյունաչափի վերջնական հաստումը, նշանառուի զեկուցման հիման վրա։

20. Առաջուց տրված հրամանների բոլոր փոփոխումները կատարվում են հրամանով, նույն հաջորդականությամբ, ինչպես տրված են յեղել հիմնական հրամանները (հոդ. 17). բոլոր փոփոխվող հրամանները տրվում են միայն անհրաժեշտության դեպքում. հիմնական հրամաններից ամեն մեկը պահպանում է իր ուժը մինչև նրան փոփոխող նոր հրաման տալը։ Ավելորդ հրամաններ տալը և հիմնական հրամանների կրկնելն առանց կարիքի, հավասարապես անթույլատրելի յե։ Բոլոր փոփոխող հրամանները կատարվում են վորպես հիմնական հրամաններ (հոդ. 18)։

21. Նշանոցային հարմարանքների հաստումների փոփոխումներին վերաբերող սխալ տված հրամանը փոխելու համար հրաման տալ՝ «ԱՆԿՅՈՒՆԱՉԱՓԸ (ՀԱՐԹԱՉԱՓԸ, ՆՇԱՆՈՑԸ, ՓՈՂԱԿԸ) ԹՈՂՆԵԼ»։

Կատարումը, հրանոթների հրամատարները.— ա) Յեթե սխալ տրված հրամանն արդեն ընդունվել է նշանառուի (արկղավորների) կողմից, ջնջում է այդ իր գրքույկում և հրաման է տալիս նախորդ հաստումը, բ) յեթե սխալ տրված հրամանը չի ընդունվել նշանառուի (լրացնողի) կողմից, ջնջում է իր գրքույկում գրած այդ հրամանը և նշանառուին (արկղավորին) այլևս հրաման չի տալիս։

22. Հրանոթներով, ջոկով և անընդհատ կրակով հրաձգությունն սկսվում է, իբրև ընդհանուր կանոն, աջ թևից և կատարվում է հրանոթներով ըստ հերթի։ «Հրանոթներով» հրաձգության ժամանակ «ԿՐԱԿ» հրամանը վերաբերում է միայն հերթական հրանոթին։ Անընդհատ կրակով հրաձգության ժամանակ, ձախաթևյան հրանոթի ձիգից անմիջապես հետո այդ հրանոթի հրամատարը փոխանցում է աջաթևյան հրանոթի հրամատարին՝ «ՀԵՐԹ» հրամանը։

23. Ջոկով հրաձգության ժամանակ հարևան հրանոթների ձիգերը պիտի հետևեն մեկը մյուսին մեկական վայրկյանից հետո։ Անընդհատ կրակի ձիգերի ընդմիջումների ժամանակամիջոցը խստապես պետք է հավասար լինի մարտկոցի հրամատարի նշանակած ժամանակին։

24. Շտապ կրակը պետք է վարել հրա-

նոթների պատրաստ լինելուն պես, այնքան ժամանակ, մինչև ամեն մի հրանոթ կատարի նշանակած ձիգերի քանակը կամ՝ մինչև «ԿԱՑ» հրամանը։ Ամեն մի ձիգից հետո հրանոթն անմիջապես լցվում է և կատարվում է հաջորդ ձիգը։ Հրանոթի նշանառությունն ստուգում է նշանառուն և յեթե հարկավոր է, ուղղում է ամեն մի ձիգից առաջ։

25. Անընդհատ կրակով հրաձգություն կատարելիս, հրանոթները լցվում են այն հաշվով, վոր ժամանակին պատրաստ լինեն ձիգ կատարելու համար (հոդ. 20)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յեթե հրաձգությունը կատարվում է մեծ ընդմիջումներով, վաղաժամ լցնելը կարող է լիցքի չափազանց տաքացում առաջացնել, վորն անխուսափելիորեն կանդրադառնա հեռավորության մեծանալու վրա և պատճառ կդառնա պայթյունների ցրման մեծանալուն։

26. Կրակն կանգնեցնելու համար հրաման տալ՝ «ԿԱՑ».

Կատարումը.— Բոլոր հրամատարները կրկնում են հրամանը, միաժամանակ ձեռքը բարձրացնելով։

Նշանառուները դադարեցնում են բոլոր գործողությունները, և յեթե հրանոթը լցրած է յեղել, զեկուցում են այդ մասին հրանոթի հրամատարին։

Լցրած հրանոթների հրամատարները զեկուցում են ջոկի հրամատարին՝ «ԱՅՍԻՆՁԸ ԼՅՐԱԾ Է».

27. Յեթե անհրաժեշտ է հրաձգություն կատարել վոչ բոլոր հրանոթներով, այլ նրանցից մեկն ու մեկով, հրաման տալ՝ «ԿՐԱԿԵԼ ԱՅՍԻՆՁԻՆ»։ Մարտկոցի մյուս հրանոթները շարունակում են կատարել բոլոր այն հրամանները, վորոնք վերաբերում են հաստումների փոփոխումներին, բայց հրանոթները չեն լցնում։

28. Յեթե վորևե հրաման վերաբերում է մարտկոցի վոչ բոլոր հրանոթներին, այլ միայն նրանցից մեկն ու մեկին, այդ դեպքում այդպիսի յուրաքանչյուր հրամանից առաջ պետք է հրաման տալ՝ «ԱՅՍԻՆՁԻՆ» կամ «ԿՐԱԿՈՂԻՆ»։

29. Յեթե հրանոթներով, ջոկով կամ անընդհատ կրակով հրաձգության ժամանակ վորևե հրանոթ չի կարողանում ժամանակին ձիգ կատարել, իր կրակի հերթը բաց է թողնում, և ջոկի հրամատարը զեկուցում է՝ «ԱՅՍԻՆՁԸ ԲԱՑ Է ԹՈՂՆՎՈՒՄ»։ Այդ խոսքերն անմիջապես հայտնում են մարտկոցի հրամատարին։

30. Առաջին ձիգերից հետո, յեթե ընդհանուր ուղղությունը ճիշտ է լինում, մարտկոցի հրամատարը հրաման է տալիս՝ «ՃԻՇՏ Է»։

31. Յեթե անդրադարձիկի նշանառությամբ

հրաձգության ժամանակ նախատեսվում է հարթաչափի նշանառությամբ հրաձգության անցնելու հնարավորություն, հրանոթները նախորոք պիտի նշադրված լինեն ոժանդակ կետի վերաբերյալ անկյունաչափով և հարթաչափով. դրա համար ջոկի հրամատարը հրաման է տալիս՝ «ՆՇԱԴՐՎԵԼ»։

Անդրադարձիկով հրաձգությունից հարթաչափով հրաձգության անցնելն իրականացնելու համար հրաման տալ՝ «ՆԻՇԵՐՈՎ»։

32. Կրակի դասակի հրամատարը հսկում է ուղղումների հաշվառմանը՝ համացուցների թեքման վերաբերյալ անկյունաչափի ուղղումներին և զառիվայրի վերաբերյալ ուղղումներին։

Համացուցի թեքման վերաբերյալ անկյունաչափերի ուղղումները հաշվի չեն առնվում՝ 76 մ. մ. 1902 թ. թնդանոթներով հրաձգության ժամանակ նշանոցի 150 բաժանումից ավելի հեռակայության վրա։ Հարթաչափերի ուղղումները մտցվում են, երբ կրակի դիրքը գտնվում է զառիվայրի վրա։

Այս բոլոր ուղղումները հրամանով տրվում են դասակի հրամատարի կողմից, իրենց համապատասխան նշանոցային հարմարանքների հաստումների փոփոխում և տրվում են կարիք չեղած դեպքերում «ԿՐԱԿ» հրամանից անմիջապես առաջ։

Հրանոթների հրամատարները հաշվի չեն առնում փողանցքի մաշվածության ուղղումները և հրամայում են նշանառուներին, իրենց համապատասխան նշանոցային հարմարանքների հաստումների փոփոխումներ։

33. Փակ կրակի դիրքում տեղավորված ժամանակ ոչյալ նպատակին հրաձգությունը վերջացնելուց հետո հրաման տալ.

1. «ԳՐԻ ԱՌՆԵԼ ՀԱՍՏՈՒՄՆԵՐԸ».

2. «ՆՊԱՏԱԿ № 0 ԱՅՍԻՆՉ» (նպատակի անունը).

Կատարումը. — Հրանոթի հրամատարները գրում են նպատակի անունն ու համարը, ընդգծում վերջին հաստումների գրվածքը և զեկուցում են ջոկի հրամատարին ըստ հրանոթների №-ի կարգի։

Ջոկի հրամատարը գրում է նպատակի անունն ու համարը և հրանոթների հաստումները։

34. Գրված նպատակին հրաձգությունը վերսկսելու համար հրաման տալ՝

1. «№ 0 ՆՊԱՏԱԿԻՆ»

2. ԱՅՍԻՆՉՈՎ № 0, որինակ «ՇՐԱՊՆԵԼՈՎ № 0»

3. «ՅԵՎՍ ՁԱԽ (աջ) 00—00» (յեթե հարկավոր է)։

4. «0—0. ՓՈՂԱԿ 0—0» (յեթե հարկավոր է)։

5. ԿՐԱԿԻ ԿԱՐԳԸ, որինակ՝ «ՅԵՐԵՔ ՁԻԳ».

6. «ԿՐԱԿ».

35. Ձանազան դեպքեր հրաձգության ժամանակ.

ա) Փստոցի դեպքում նշանառուն իջեցնում է հրահանը ևս յերկու անգամ. յեթե ձիգ չառաջանա, հրանոթը դատարկվում է կամ (շտապ կրակի ժամանակ) դատարկվում ու նորից լցվում է հրանոթի հրամատարի հրամանով, վորն այդպիսի դեպքերում ղեկավարվում է նյութական մասի կանոնագրքի ցուցումներով։

բ) Յեթե «ԿԱՅ» հրամանով լցրած հրանոթը չի կարողացել ձիգ կատարել (հոդ. 26), դասակի հրամատարը ղեկուցում է մարտկոցի հրամատարին «ԱՅՍԻՆՁԸ ԼՅՐԱԾ Է»։

Հրանոթի դատարկումն իբրև ընդհանուր կանոն, կատարվում է արձակելով, մարտկոցի հրամատարի հրամանով։ Միացական փամփշտով հրաձգության ժամանակ հրանոթը կարելի յե դատարկել առանց՝ արձակելու, փամփուշտը դուրս հանելով՝ «ՓԱՄՓՈՒՇՏԸ ՀԱՆ» հրամանով։

գ) Յեթե հրանոթը լցնելու ժամանակ արկը

լավում է, և փողանցքը չի մտնում ձիգ կատարելու համար, նշանառուն այդ մասին զեկուցում է հրանոթի հրամատարին, իսկ վերջինս հրամայում է հրանոթը դատարկել, ղեկավարվելով նյութական մասի կանոնագրքի ցուցումներով։

դ) Յեթե փստոցից հետո արկը լավում է փողանցքում, վարվում են այնպես, ինչպես ցույց է տրված նախորդ դ. կետում։

յե) Յեթե ձիգից հետո պարկուճը լավում է փամփշտանոցում և դուրս չի գալիս, փականավորը դուրս է գցում նրան փարտիչով (լցահանով) փողաբերանի կողմից։

զ) Յեթե հրաձգության ժամանակ առատամի տակի հողը շատ է փափկացել և առատամն ամրացնելն անհնարին է, հրանոթի հրամատարը հրամայում է հրանոթը տեղափոխել մի ուրիշ տեղ։

է) Յեթե հրաձգության ժամանակ առատամը շատ է խրվել հողի մեջ, և ուղղեկավորը (ուղղեկավորները) չի կարողանում առանց ուրիշի ոգնության նրան դուրս հանել, հրանոթի հրամատարը հրաման է տալիս՝ «ԱՌԱՏԱՄԻ ՄՈՏ».

Այդ հրամանով համարները վերցնում են առատամի բռնատեղերից ու անիվներից և ոգնում են ուղղեկավորին (ուղղեկավորներին) ազատել առատամը։

36. Մարտի ընդհատումների ժամանակ մարտկոցի հանդատանալու համար հրաման տալ՝ «ՇՏԿՎԵԼ»։

Կատարումը.— Փականավորները դոցում են փականքները։

Ուղղեկավորները հավաքում են կրակած պարկուճները, ծածկում են փամփշտի վանդակները և դնում են ռմբարկղների մեջ։

Բոլոր համարներն ազատ դրություն են ընդունում և հրանոթի հրամատարի թույլտվությամբ կարող են հեռանալ հրանոթներից։

37. Հակառակորդի գնդակոծության տակ, հրանոթի անձնական կազմն աշխատում է, ծածկվելով վահաններով և ռմբարկղներով. անձնական կազմը թաքստոց տանելու համար, դասակի հրամատարը հրաման է տալիս՝ «ԴԵՊԻ ԹԱՔՍՏՈՑ» կամ «ԱՅՍԻՆՁԸ ԴԵՊԻ ԹԱՔՍՏՈՑ»

Եթե այդ ժամանակ հատուկ պատրաստված թաքստոցներ չկան, հրանոթների հրամատարները ցույց են տալիս թաքնվելու տեղը։

38. Հրանոթի անձնական կազմը թաքստոցներից դուրս կանչելու համար հրաման տալ՝ «ՀՐԱՆՈԹՆԵՐԻ ՄՈՏ» կամ՝ «ԱՅՍԻՆՁԸ ՀՐԱՆՈԹԻ ՄՈՏ»։

39. Կրակը վերջնականապես դադարեցնելու և նյութական մասը յերթական շարժմանը պատրաստելու համար, մարտկոցի հրամատարը հրաման է տալիս՝ «ԱՎԱՐՏ»։

Այս հրամանի կատարումը ցույց է տրված հավելվածի աղյուսակում։

Եթե իորոշ հրանոթներ լցրած են յեղել, մարտկոցի հրամատարը «ԱՎԱՐՏ» հրամանից առաջ ցուցումներ է տալիս լցրած հրանոթները դատարկելու համար։

———

Հայկական Ռազմական Դպրոցի տպարան։ Տիրաժ 150.
Յերևան, Շահումյան փ. № 94.

ՀՀ Ազգային գրադարան
NL0225225

42.488

ԳԻՆՆ Ե 25 ԿՊԵ.